Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ
ԵՊՀ

ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՐԵՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Կերեն գյուղը գտնվում է Կապանից 8 կմ հարավ-արևելք Կապան-Կովսական մայրուղու աջ կողմում՝ Ողջի գետի աջ ափին: Ժամանակակից գյուղի տեղադրման վայրն ամենայն հավանականությամբ համընկնում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Սյունիք աշխարհի Կովսական գավառի Կերեն գյուղին (Ա. Հակոբյան):

2003 թ. այստեղ պատահականորեն հայտնաբերվեցին բրոնզե դաշույններ, զարդեր, զրահի մասեր, խեցանոթների բեկորներ, որոնք հանձնվեցին Բերձորի երկրագիտական թանգարան:

2003-2005 թթ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (Ա. Գնունի, Գ. Խաչատրյան) հետազոտություններ կատարեց Կերենում: Հնավայրը գտնվում է գյուղից մոտ 0,5 կմ հարավ-արևմուտք: Դամբարանադաշտը ձգվում է մոտ 800 մ ջրբաժանի երկայնքով՝ տարածվելով նաև ճանապարհի աջ և ձախ կողմերում աճող երիտասարդ անտառում, զբաղեցնելով նաև մերձակա բլրի գագաթը: Հետագա ուսումնասիրությունների ընթացքում գյուղի շրջակայքում հաստատագրվեց ևս երեք դամբարանադաշտ, ինչպես նաև բնակատեղի:

Դամբարանները հիմնականում ներկայացնում են քարարկղներ, որոնց կառուցման ժամանակ օգտագործվել են բազալտի ընտանիքի քարատեսակներ, ինչպես նաև կրաքար (բնորոշումը՝ Գ. Խաչատրյանի): Որոշ դեպքերում դամբարանների ուղղահայաց պատերը փորված են հիմնահողի մեջ: Իր կառուցվածքով աչքի է ընկնում թիվ 74 դամբարանը, որտեղ

երկայնական պատերի վերին շարվածքի քարերը մի փոքր առաջ են դրված՝ առաջացնելով կեղծ թաղ: Նման երևույթ նկատվում է մ.թ.ա. I հազ. (Օշական, Կարմիր բլուր)[1]:

Ըստ հատակագծի՝ գրեթե բոլոր դամբարանները ուղղանկյուն են, բացառությամբ թիվ 74 դամբարանի, որտեղ նկատվում է հատակագծի որոշ սեղանաձևություն: Դամբարանների մեծամասնությունը զուրկ է պահպանված արտաքին նշաններից, սակայն տարածքում նշմարվում են մի քանի դամբանաբլուրների հետքեր: Մասնավորապես հարկ է նշել բլրի գագաթին տեղադրված քարահողային լիցքով դամբանաբլուրները (թիվ 1 և 3 դամբարաններ): Իր կառուցվածքով աչքի է ընկնում թիվ 1 դամբանաբլուրը: Դամբարանը հատակագծում ձվաձև է, արևմուտք-արևելք առանցքով տրամագիծը 8 մ է, իսկ հյուսիս-հարավ առանցքով՝ 6 մ: Քարային լիցքի բարձրությունը 1,4 մ էր: Լիցքը հեռացնելուց հետո բացվեց 20–50 սմ հզորությամբ մոխրով և այրված կավի բեկորներով հագեցած կավահողից կազմված հողային շերտ: Հողային շերտը հեռացնելուց հետո դամբարանի հարավային մասի կենտրոնական հատվածում բացվեց ոչ մեծ քարերից շարված հարթակ՝ 1,30 × 1,10 չափերով, որի վրա տեղադրված էր խիստ այրված գետաքար: Պեղավայրի հարավարևմտյան հատվածում բացվեց 3,5 մ երկարությամբ, արևելք-արևմուտք ուղղվածությամբ քարաշար, որն ավարտվում էր քարերից շարված, 1,5 մ տրամագիծ ունեցող շրջանակով: Շրջանի կենտրոնում տեղադրված էր բերանի վրա շրջված կարաս: Կարասի մեջ տեղադրված էր կրակի ներգործության հետքեր կրող գետաքար, որի վրա լցված էր 30–40 սմ հզորությամբ մոխրաշերտ: Հայտնաբերված խեցեղեն նյութի վերլուծությունը թույլ է տալիս թվագրել կառույցը մ.թ.ա. VII–VI դդ.:

[1] *С. Есаян, А. Калантарян.* Ошакан I, Е., 1988, с. 86, 92. *А. Мартиросян.* Город Тейшебаини. Е., 1961, с. 139–141. Միաժամանակ հարկ է նշել, որ Օշականի նմանատիպ դամբանախցերն իրենց չափերով շատ ավելի մեծ են, իսկ Կարմիր բլուրի դամբարանները հատակագծում օվալաձև են:

Դամբարանախցերի ուղղվածության մեջ որևէ օրինաչափություն չի դիտարկվում: Պահպանված կառույցների երկարությունը՝ 140-ից (թիվ 25 և 20 դամբարաններ) 300 սմ (թիվ 64 դամբարան), լայնությունը՝ 50-ից (թիվ 25 և 20 դամբարաններ) 90 սմ (թիվ 32 դամբարան):

Որոշ դամբարաններից հայտնաբերված է մարդաբանական նյութ (ընդամենը՝ 14 մարդու կմախք) (բնորոշումները՝ Ռ. Մկրտչյանի): Դամբարաններում թաղված է մեկական ննջեցյալ: Բացառություն են կազմում միայն թիվ 34՝ երկու (25–38 տ. կին և 35-40 տ. տղամարդ) և 45՝ երեք (45-55 տարեկան և 35-ից բարձր տղամարդիկ և 25-35 տարեկան կին): Թիվ 54 դամբարանում հայտնաբերված են մանր եղջյուրավոր անասունների ոսկորներ (բնորոշումը՝ Ն. Մանասերյանի):

Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութը կարելի է բաժանել մի քանի խմբի: Վաղ խմբին պատկանում է 2005 թ. պատահականորեն հայտնաբերված կեռախաչի և մարդու պատկերով բրոնզե գոտին, որի եզրերը զարդարված են սեպաձև զարդանախշով, բրոնզե ճակատակալ, հորիզոնական փողրակներով անոթը: Նման սեպաձև զարդանախշով գոտիներ հայտնի են Կարմիր բերդից (մ.թ.ա. I հազ. սկիզբ), Օձունից և Ստեփանավանից (մ.թ.ա. X–IX դդ.)[2]: Մ.թ.ա. II հազ. վերջով է թվագրվում թիվ 3 դամբանաբլուրը, որտեղ հայտնաբերված են հորիզոնական փողրակներով գավեր և թասիկներ, սև փայլեցված թաղարներ, ինչպես նաև խողովակաձև ուլունքներից բաղկացած ուլունքաշար: Թիվ 3 դամբարանի գույքն իր բազմաթիվ զուգահեռներն ունի Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում[3]:

[2] *S. Esayan.* Gurtelbleche der alteren Eisenzeit in Armenies. Beitrage zur Allgemeinen und Vergleichenden Archeologie. Bd. 4. München 1985, S. 111–113 Ab. 12 (38-40); *С. Деведжян.* Лори-Берд I. Е., 1981, с. 51, таб. 18, *Ս. Եսայան,* Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի. պր. II, Ե., 1967, էջ 13–14, 46 աղ. XVI (1).

[3] *O. Xnkikyan.* Syunik during the Bronze and Iron Ages. Barrington 2002, p. 50–51 pl. XXVII–XXVIII.

Նյութի գերակշռող մասը բնորոշ է մ.թ.ա. VII–V դդ.:

Հայտնաբերված նյութերում աչքի է ընկնում թիվ 64 դամբարանի գույքը[4]: Դամբարանն իրենից ներկայացնում է հյուսիս-հարավ կողմնորոշմամբ քարարկղ՝ տեղադրված բլրի թեք լանջին: Հատկանշական է, որ արևելյան ավելի բարձրադիր պատը շարված էր երեք շարք քարերից, իսկ արևմտյանը՝ միայն մեկ շարքից: Ամենայն հավանականությամբ նման կերպ դամբարանը քողարկվում էր: Դամբարանի ավերված հատվածում հայտնաբերվեցին երեք արարողակարգային գավաթ, սափոր և կոպիտ ձեռածեփ անոթ-«աղաման»: Դամբարանի կենտրոնական հատվածում տեղադրված էր գոտեկապով մերկ տղամարդու սնամեջ արձան, որի ձեռքին գավաթ է: Արձանի ձեռքերը գրկում էին «կեռնոս» տիպի անոթ, ձեռքը հպված էր ցլակերպ անոթին: Իր ձևով արձանիկը դասվում է ավանդական-պայմանական տիպի ստեղծագործությունների թվին (բնորոշումը՝ Բ. Առաքելյանի), որոնք բնութագրվում են հարթ դեմքով, ռելիեֆ նշված ճակատով և քթով: Աչքերը և բերանը նշված են խորը անցքերով և ճեղքով[5]: Իրանական նյութում (Լուրիրստան) գավաթով մարդկանց պատկերները լայնորեն տարածված են: Հազվադեպ չեն նաև անոթը համբուրող մարդու տեսք ունեցող կամ կենդանակերպ կեռնոսները: Թեհրանի թանգարանում պահպանվող կեռնոսներից մեկը զարդարված է անոթը համբուրող մարդու պատկերով, իսկ Կապանի շրջանից հայտնաբերված կեռնոսը՝ կենդանակերպ քանդակով[6]: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, դամբարանի խորհրդանշական կենտրոնը կեռնոսն էր: Բացի այդ, այն ժամանակ, երբ տարածաշրջանում ավանդույթի

[4] Կերենի թիվ 64 դամբարանի մասին մանրամասն տե՛ս *Ա. Գնունի*, Կերենի «քրմական» դամբարանի պեղումները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 3, էջ 215–218:

[5] *Б. Аракелян*. Очерки по истории искусства древней Армении. Е., 1976, с. 14–16.

[6] *E. Negahban*. Notes on some objects from Marlik. Journal of Near Eastern Studies (այսուհետև՝ JNES). 1965, N 4, p. 317.

արտահայտումը գնում է հետագա պարզեցման և ոճավորման ճանապարհով, Կերենում այն պահպանվում է նախնական ձևով:

Իրանական ազդեցությունն առկա է նաև Կերենի խեցեղեն նյութում: Մասնավորապես փոքր կիսագնդաձև բռնակներով անոթներն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Խուրվինում, Սիալկի B և Հասանլուի 3B հորիզոններում: Իրանական աշխարհում բազմաթիվ զուգահեռներ ունեն Կերենում հաստատագրված «կեռնոս» տիպի անոթները: Ընդսմին թիվ 64 դամբարանից հայտնաբերված կեռնոսի ամենամոտ զուգահեռը հայտնի է Պերսեպոլսից: Բազմաթիվ իրանյան զուգահեռներ ունեն նաև կենդանակերպ և կենդանակերպ բռնակներով անոթները[7] :

Որոշ իրանական զուգահեռներ դիտարկվում են նաև զարդանախշում: Այսպես, Կերենի խեցեղենում առավել լայնորեն տարածված սյուժեն՝ դրոշմի եղանակով կատարված կետազարդ եռանկյունիներ, համադրված սոլյար պատկերների հետ, իր զուգահեռներն ունի Մարլիկ-թեփեից հայտնաբերված մեդալիոնում:

Բազմաթիվ նմուշներ իրենց վրա են կրում ուրարտական (վանտոսպյան) մշակույթի ակնհայտ ազդեցությունը: Մասնավորապես, հարկ է նշել այնպիսի կարևոր հատկանիշ, ինչպես վզի և իրանի ռելիեֆ ներծկված անցումն է: Ուրարտական նյութում իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Կերենում հաստատագրված տափակ և աղեղնաձև կանթերը: Ուրարտական ազդեցության մասին են վկայում սափորներից մեկի իրանին թրծումից առաջ կատարված ուղղահայաց խազերը: Նմանատիպ նշաններ, որոնցով նշվում էր անոթի տարողությունը, հաստատագրված են Էրեբունիից և Կարմիր բլուրից հայտնաբերված բազմաթիվ անոթներում: Հատկանշական է

[7] *O. Xnkikyan*. Op. cit. 2002 p. 90, pl LXXXVI (28); *R. Girshman*. Iran. L., 1951 pl 74; Մ. Погребова. Иран и Закавказье в раннем железном веке. М., 1987, с. 94-95; *E. Negahban*. Op. cit. p. 317.

մոխրագույն սափորի զարդանախշումը: Այն իրենից ներկայացնում է երկու զուգահեռ փորագիր գծերով կատարված 4 պլատոնյան խաչ, որոնց ծայրամասերում տեղադրված են շրջանակներ: Ե՛վ պլատոնյան խաչը, և շրջանակները հայտնի են որպես ուրարտական հիերոգլիֆ նշաններ[8]: Սակայն այս երկու նշանների համադրումը, ինչպես նաև այն փաստը, որ սափորի իրանին պատկերված են 4 այդպիսի նշաններ, հուշում են, որ հին վարպետն ընկալում էր դրանք որպես զարդ: Նշված փաստերը և դրանց համադրումը Գարեգինի (նախկ. Ֆիզուլու) շրջանում հայտնաբերված ուրարտական թաղումների, ինչպես նաև Բերձորի սեպագիր արձանագրության հետ, վկայում են տարածաշրջանում Վանի թագավորության լուրջ ազդեցության մասին[9]:

Այսքանով հանդերձ, պետք է արձանագրել, որ կերենյան խեցեգործության ավանդույթները զարգացել են անկասկած տեղական հիմքի վրա:Կերենի խեցեղենն իր բազմաթիվ զուգահեռներն ունի համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններում (Շիկահող, Նորաշեն, Աստղիբլուր, Ջրառատ, Սինգեչաուր, Յասիթ-թեփե, Սրբ Չիչի և այլն)[10]: Կարելի է նշել խեցեղենի այնպիսի բնորոշիչ գծերը, ինչպես լայն հարթ հատակները, Հայաստանում և, մասնավորապես Սյունիք-Արցախյան տարածաշրջանում լայնորեն տարածված սապատավոր բռնակները և այլն[11]:

Կերենի խեցեղենում հանդես են գալիս հետևյալ կենդանակերպ տարրերը: Նախ, դա անոթի իրանն օղակող օձի ռելիեֆ պատկերն է, որի պոչն ու գլուխը տեղադրված են սափորի բռնակին (թիվ 31 դամբարան): Ի հայտ են եկել նաև խոյակերպ (թիվ 24, 63 և 64 դամբարաններ), ցլագլուխ և թռչնակերպ բռնակներ: Հատկանշական է թիվ 54 դամ-բարանից հայտնաբերված շերեփը՝ խոյակերպ բռնակով: Նմանատիպ անոթներ հայտնի են դեռևս մ.թ.ա. II հազ. կեսից (Սուզ) և մ.թ.ա. I հազ. տարածվում են Իրանում և Անդրկովկասում (Սինգեչաուր, Խոջալու, Խանլար, Սիալկ B, Հասանլու)[12]: Կենդանակերպ անոթները հազվադեպ չեն ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասում և Իրանում (Խուրվին, Սինգեչաուր, Խրտանոց, Շիկահող, Տանզավեր, Ագարակ, Թրելի և այլն)[13]: Կերենյան գտածոներից առանձնակի պետք է նշել թռչնակերպ բռնակով հալոցը, ինչն ըստ մեզ կապված է արհեստի պաշտամունքի հետ:

Սպառազինությունը ներկայացված է երեք կոթառավոր դաշույններով, որոնցից մեկը զարդարված է կենաց ծառի պատկերով, նիզակի ծայրով (թիվ 52 դամբարան), ինչպես նաև երկաթյա նետասլաքով և տեգի բեկորներով (թիվ 54 A

---

[8] *Б. Пиотровский.* Кармир-Блур II. Е., 1952, с. 19; *Г. Аветисян.* Биайнская керамика из памятников Араратской долины. Е., 1992, таб. XV, XX, XXIV, XXV, XXXIX, XLI.

[9] *Հ. Սիմոնյան, Ա. Գնունի,* Արցախի ազատագրված տարածքների հնագույն նախաքրիստոնեական և միջնադարյան բնակավայրերի ուսումնասիրությունը 1993–1995 թթ., ՀՀ-ում 1993–1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, Ե., 1996, էջ 70, *Ա. Մովսիսյան,* Նորահայտ սեպագիր արձանագրություն բերձորյան քարանձավից (նախնական դիտարկումներ), Մաշտոցյան Դ ընթերցումներ, Օշական 2002, էջ 53–55:

[10] *O. Xnkikyan.* Op. cit., p. 86 pl. LXXIX (15), LXXX (1–5) աղ LIX (8), LXX (9), LXXIV (9), LXXV (14), LXXVI (3,6), XC (15, 17, 18); *Ի. Կարապետյան,* Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI–IV դդ. Ե.,2003 էջ 34–35, աղ. 14 (7)18 (2); Древнейшие государства Кавказа и Средней Азии. сер. Археология СССР М., 1985. Таб XIX (3); *Дж. Халилов, Г. Асланов.* Археологические находки в Сырт-Чичи. МКА. Т. VII. Баку. 1073 с. 177 таб 1 (6); с. *Казиев.* Археологические раскопки в Мингечауре. МКА. Т. 1. Баку, 1949, с. 13–14 ЭП..3; *Г. Тирацян.* Культура древней Армении. Е., 1988, с. 36–40.

[11] Կերենից հայտնաբերված խեցեղենի տիպերի մասին տե՛ս *Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Ս. Հմայակյան, Հ. Սիմոնյան,* Դիտարկումներ Կերենի դամբարանադաշտի վերաբերյալ. Հին Հայաստանի մշակույթը, պր. XIII, Ե., 2005:

[12] *Н. Погребова.* Указ. соч., с. 88–89.

[13] *Н. Погребова.* Указ. соч., с. 96–99; *O. Xnkikyan.* Op. cit., pl. LXXXIIII (15), LXXXVI (38).

դամբարան)[14]: Հայտնաբերված են նաև զրահի մասեր: Ընդհանուր առմամբ, դիտարկելով Կերենից հայտնաբերված դաշույնները, հարկ է նշել դրանց ձևերի որոշակի արխայիզմը, ինչը վկայում է նշված տարածաշրջանում մշակույթների ժառանգական կապի մասին:

Կերենի դամբարանադաշտի ուսումնասիրության նախնական արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Դամբարանադաշտը գոյատևել է մ.թ.ա. XII-ից V դդ. ընթացքում:
2. Խեցեղեն նյութում ուրարտական խեցեղենի որոշ բնորոշ գծերի առկայությունը, համադրությամբ տարածաշրջանում այլ ուրարտական նյութերի հետ, վկայում են նշված տարածաշրջան Վանի թագավորության մշակույթի թափանցման մասին:
3. Դամբարանից հայտնաբերված խեցեղենը (սափորներ, միակցված անոթներ, արարողակարգային գավաթներ) ունի բազմաթիվ զուգահեռներ ինչպես Սյունիքում և Արցախում, այնպես էլ Անդրկովկասում և Իրանում: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ մ.թ.ա. VI դ. Սյունիքի և Արցախի մշակույթը, զարգանալով տեղական հիմքի վրա, այնուամենայնիվ կրելով հարևան Իրանի մշակույթների ազդեցությունը, ձևավորվում է որպես մշակույթի լոկալ տիպ, որը բնորոշվում է ինչպես թաղման ծեսում, այնպես էլ նյութական մշակույթում արտահայտվող առանձնահատկություններով:

[14] *Ա. Գնունի*, Առաջնորդի, զորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղումը հին Հայաստանի տարածքում, «Հայկական Բանակ», 2006, թիվ 4, էջ 83–84: